

ԼԵՎՈՆ (ՆԵՐՍԵՀ ԱԲՂ.) ԱԼՈՅԱՆ

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի
ակադ. Հր. Թամրազյանի անվ. հայ գրականության
պատմության ամբիոնի հայցորդ

ԿՆՈՋ ԿԵՐՊԱՎՈՐՈՒՄԸ ԾԵՐԵՆՑԻ ՎԵՊԵՐՈՒՄ

*Բանալի բառեր – Ծերենց, պատմավեպ, կնոջ կերպավորում,
հայրենասեր կին, անձնագրի կին*

Եվփիմեի և Սարգսրիտի կերպավորումը «Թորոս Լևոնի» վեպում

Ծերենցն իր երեք պատմավեպերի նյութը հիմնականում քաղել է Սեբեոսի, Հովհաննես Դրասխանակետցու, Մատթեոս Ուռհայեցու, Թովմա Արծրունու, Սմբատ Սպարապետի աշխատություններից և ներկայացրել է հայոց պատմության երեք արտասովոր ժամանակաշրջանները՝ իրենց պատշաճ դեպքերով ու դեմքերով: Գրության հաջորդականությամբ առաջինը «Թորոս Լևոնին» է, որում Ծերենցը նկարագրում է Կիլիկիայի պետական անկախության վերականգնման համար XII դարի կեսերին ծավալված պայքարը:

Վեպում հեղինակը հանդես է բերել կանանց հերոսական մի շարք կերպարներ, որոնք համակված են հայրենիքի ազատագրության վեհ գաղափարով ու եռանդագին մասնակցում են Թորոս իշխանի՝ պետական կարևորություն ունեցող նախաձեռնումներին: Այդպիսի կանանցից մեկը Թորոսի կինը՝ Եվփիմեն է, որին Ծերենցն օժտել է մարդկային լավագույն հատկություններով, վսեմ մարդասիրությամբ ու ջերմ հայրենասիրությամբ, խիզախությամբ, անձնագրի հողությամբ, մտավոր և հոգևոր բարձր ընդունակությամբ, «վասնզի այդ չքնաղ և արքունի կերպարանքին փափկության և մտավորական սրամտության ներքև բուռն և խրոխտ բնավորություն մը կար, որ կարելի էր կոտրել և փշրել, բայց ոչ երբեք ծռել և հակել»¹:

Եվփիմեն իր անձնական զգացումները ներդաշնակում է

¹Ծերենց, Երկեր, Երևան, 1957, էջ 34: Այսուհետ սույն գրքից մեջբերումների էջերը կնշվեն մեջբերումից հետո՝ փակագծերում:

հայրենասիրության բարձր գաղափարի հետ՝ խորապես գիտակցելով, որ վերջինս խիստ անհրաժեշտ նախապայմաններից մեկն է անձնական երջանկության ստեղծման համար: «Մի կարծեր զիս այն կանանցմե,- ասում է Եվփիմեն Թորոսին,- որոնց մտքին ընդարձակությունը իրենց սրկապանեն անդին չի կրնար տարածվիլ, ո՛հ, չէ՛, ես քեզի՝ ինչպես Ռուբենին՝ իշխանական աթոռ մը կփափագիմ, ես ձեր այս տոհմական կալվածքին մեջ Պլուտարքոսի դյուցազուններ կտեսնեմ. ներե՛, ես դեռ մորս ազգին դյուցազունքը չեմ ճանչեր, և կրնաս ապահով լինել, որ անխոնջ գործակից մը և ամենայն վտանգաց անվեհեր դիմագրավ մը հիս պիտի գտնես...» (Էջ 25):

Եվփիմեի խոսքերի մեջ առկա է կանացի սեթևեթանք, որը, սակայն, լի է ջերմ հավատով Թորոսի հանդեպ ունեցած սիրո նկատմամբ: Այդ խոսքերը հուզում են Թորոսին, և նա պատասխանում է միմիայն մի բաղձանքով. «...դու փառասեր ես, կըսես, կուզես թագուհի ըլլալ, եղի՛ր, միայն հայ եղիր, և առաջին սպասավորդ և խոնարի ծառադ ես կլինեմ, և բոլոր իմ ազգս քու հպատակդ կլինի, միայն թե օտարին գերութենեւ ազատի» (Էջ 25-26):

Նախքան Թորոս իշխանին հանդիպելը Եվփիմեն կաթոզին սիրում էր նրա եղբորը՝ Ռուբենին, բայց կյանքի հանգամանքներն այնպես էին դասավորվել, որ թշնամու անգուլթ ձեռքը շատ վաղ կտրել էր նրա կյանքի թելը:

Ռուբենին կորցնելուց հետո Եվփիմեի հոգեկան աշխարհում առաջանում է խոր բեկում. նա օր ու գիշեր մտածում էր Ռուբենի մասին և զրկվում քնից ու հանգստությունից: Բարեբախտաբար, անանցանելի թվացող վիշտը մի գեղեցիկ օր փոխվում է ուրախության և դուրս բերում նրան հոգեկան ծանր իրավիճակից:

Թորոսին հանդիպելուց հետո Եվփիմեն գտնում է իր կորցրածին, որն ամոքելու էր իր ցավերը և նոր կյանք պարզելու իրեն: Հեղինակը վեպի սկզբում նկարագրում է Եվփիմեի մանկությունը, որբանալը, ապա Դիոնիսի ինամքի տակ մեծանալը: Այնուհետև բացում է նրա սրտի անթեղված կրակը, բոցեր հանում այնտեղից, վառում ընթերցողի եռությունը:

Այդպիսի բոց են Եվփիմեի անգուլթ սերը, նրա խոր մարդասիրությունը: Աղջկա անձնական և ընտանեկան կյանքի ողբերգությանը ծանոթանալուց հետո Թորոսը որոշում է նրան իր հետ հայրենիք տանել, ուստի հանգամանորեն բա-

ցատրում է հետագա իր ծրագրերի մասին և ըմբռնել տալիս նրան այն գործի վեհությունը, որին իրենց հրաշալի կյանքը պիտի նվիրաբերեին: Այդ միտքը գնալով վրդովում էր նրանց հոգին, դառնում մի երազական ու բաղձալի պատրանք:

Այնտեղ՝ հեռավոր հայրենի աշխարհում, Եվփիմեն կստանար այն, ինչ որ այստեղ առհավետ կորցրել էր՝ ազատությունը, հոգու անդորրը, պատիվը, բոլորը կվերականգնվեին և նրա կյանքը կանցներ խաղաղ, անխռով, երջանիկ:

Ծերենցը նրա մեջ հայտնաբերում է այնպիսի գծեր, որոնք իրենց պայծառությամբ, առաքինությամբ և գրավչությամբ դառնում են ուսանելի: «Իմ պարտքս է,- ասում է Եվփիմեն,- վիրավորները դարմանել, որբերու, այրիներու հաց, բնակարան ու մխիթարություն ճարել, հուսահատները քաջալերել, այո՛, գիտեմ իմ պարտքս ասոնք են, և թե որ ասոնք ես չի կատարեմ՝ արժանի չեմ իշխանի մը ոչ թե կին, այլև ոչ աղախին լինելու» (Էջ 67-68):

Եվփիմեն իր քաղաքական հայացքներով ու գաղափարներով լիովին համապատասխանում էր Թորոսին. նա արժանի էր դառնալու նրա կինը, նրա կյանքի անբաժան ընկերուհին, սակայն Ծերենցը դրանով չի բավարարվում: Եվփիմեն մոր կողմից նա ներկայացնում է սերված հայկական Արծրունյաց տոհմից և դաստիարակված ազգասիրական գաղափարներով: Դրանով նա ցանկանում է հիմնավորել իր հերոսուհու հայրենասիրությունը և նվիրվածությունը Թորոսի գործին:

Թորոսի և Եվփիմեի փոխադարձ սերը ժամանակավոր ու անցողիկ բնույթ չէր կրում. այն հիմնված չէր մանր ու ճղճիմ հաշիվների վրա, որին հասնելուց հետո կարող էր անեանալ, այլ հիմնված էր հարատև ու անկեղծ զգացմունքների վրա: Եվփիմեի հանդեպ տածած անհուն սերն էր, որ Թորոսին մղում էր հերոսության: «Ես կյանք մը ունեի զոհելու ազգիս համար, կեսը դու կհափշտակես, Եվփիմե», - ասում է Թորոսը, որին հաջորդում է ներքևապես զգացվող Եվփիմեի հուզիչ պատասխանը. «Ո՛չ այդպես, կյանք մը ունեիր նվիրելիք ազգիդ, ահա երկուք ունիս անոր նվիրելիք, իմ երակացս մեջ ալ կա այդ քու Արծրունյաց արյունեդ» (Էջ 53): Ըստ էության Թորոսի և Եվփիմեի հոգեկան ու մտածական աշխարհներն ունեն միևնույն բովանդակությունը, և նրանք միանալով ավելի գորեղ են դառնում, ավելի վեհ և գեղեցիկ, և այդ ամենն ամփոփվում է հայ ժողովրդի ազատագրության արդար գործին նվիր-

վելու նրանց միասնական նպատակի մեջ²:

Ինչպես տեսնում ենք, Եվփիմեն վեպի հաջողված ռոմանտիկական կերպար է: Հեղինակը նրան հանդես է բերել դյուցազնական, առնաճի հատկություններով, որի համար էլ դյուցազնակին³ է անվանել նրան: Վերջինս կյանքի իմաստը տեսնում է հարազատ ժողովրդի ազատագրման համար մղվող անձնուրաց պայքարի մեջ: Անվեհեր մարտնչողների շարքում ճերեկացր, ներգրավելով կանանց, կոչ է անում նրանց դուրս գալ անձնական նեղ կյանքից և տղամարդու հետ մտնել ռազմի դաշտ ու կռվել հայրենիքի թշնամիների դեմ: Կնոջ առաջավոր դերի նկատմամբ ունեցած այսօրինակ վերաբերմունքը հեղինակի առաջադիմական հայացքի արդյունքն է, որը ցույց է տալիս, թե ճերեկացր որքան բարձր կարծիք է ունեցել հայ կնոջ մասին. ակնբախ է, որ նրա երեք վեպերում էլ կանայք օժտված են հայրենական բարձր գաղափարներով և ազատասիրական ձգտումներով:

Վեպում Եվփիմեն բնութագրված է իբրև ազդեցիկ կին, որն իշխում է իր շրջապատի վրա: Նա իշխում է ոչ թե իր կանացիական առաքինություններով, իր գեղեցկությամբ ու քնքշությամբ, այլ իր մարդկային բարոյական բարձր հատկություններով, առաջավոր գաղափարներով, խորը տրամաբանությամբ, ժողովրդայնությամբ, հույների դեմ տածած իր ատելությամբ: Սակայն վերջինիս մոտ երբեմն խոսում է կանացի թուլությունը: Պաշտոնական զբաղմունքներից ազատ ժամերին նա տառապում է ձանձրույթից և արտահայտում իր դժգոհությունը ամուսնուն: Թորոսը կարողանում է մեղմել Եվփիմեի հոգեկան ճգնաժամը և հանգստացնել նրան: Ուշարժան է նրանց երկխոսությունը.

«- Ինչչա՞փ ժամանակ դեռ այս կյանքը պիտի տևե:

- Դեռ մինչև վաղն իրիկուն:

- Անկից վե՞րջը:

- Անկից վերջն գրեզ այս վայրենի լեռանց իշխանուհի պիտի հրատարակեմ» (88):

Սակայն շուտով Եվփիմեն թոթափում է իրեն հետապնդող ձանձրույթը, և հայրենիքի սերը դառնում է այն հիմքը, որի վրա պիտի կառուցեր իր երջանկությունը: Եվփիմեն գիտակցում էր, որ այդ երջանկությունը լիակատար կարող էր լինել

² Տե՛ս **Ճերեկացր**, Երկեր, Առաջաբան, Երևան, 1957, էջ XII:

³ Տե՛ս **Տերտերյան Ա.**, Հայ կյասիկներ, Երևան, 1944, էջ 111:

միայն այն ժամանակ, երբ հայրենիքն ազատագրվեր օտարի լծից: Ահա թե ինչու Եվփիմեն առանց տատանվելու ասում է Թորոսին, որ «անխոնջ գործակից մը» և «անվեհեր զինակից մը» (Էջ 25) պիտի լինի Թորոսի համար: Կնոջ այս խոսքերը պետք է դիտել հայրենասիրության հայեցակետից:

Եվփիմեի մահից հետո Ծերենցը տպավորիչ գույներով է ներկայացնում Թորոսի ապրումները, երբ փոքրիկ Գոհարիկը հոր ծնկներին էր նստում, «իր գանգրահեր գլուխը կղներ կուրծքին, իր փափուկ ձեռքերով նորա մորուքը կփայփայեր, լուսավիր, քաղցր աչքերը նորա խորունկ աչքերուն կհառեր, իր գողտրիկ ձայնը՝ սրտին և տարիքին պարզութենեն բխած անոր ականջին անուշ խոսքեր կը մրմնջեր...» (Էջ 172), արդյոք ինքը՝ Ծերենցը, այդ պահին չէ՞ր հիշում իր դստեր՝ մորը կորցրած Թագուկի վաղ տարիները, երբ նա ամեն կերպ աշխատում էր մոռացության տալ իր վիշտը: «Ինչո՞ւ, հայրիկ, այսպես մեծ շունչեր կառնես», - հարցնում էր Գոհարիկը՝ լսելով հոր սրտից բխած հառաչանքները: «Դժվար էր այդ հարցմունքին պատասխանել, պետք էր խույս տալ, բայց ո՞ւր, ամեն օր, ամեն վայրկյան, երբ զբաղմունք զինք կթողվին, այսպիսի տեսարաններ կնորոգվեին, մինչև որ ժամանակը, որ հիշատակ չի մոռցներ այն մտքերուն, որ հիշողություն ունեն, այլ կը տկարացնեն...» (Էջ 172-173):

Վեպի հաջողված կանանց կերպարներից է նաև Մարգարիտը՝ Անարգաբա բերդի կուսակալի դուստրը: Մարգարիտը և Անարգաբայի իշխանը իրարամերժ հոսանքի ներկայացուցիչներ են, գաղափարապես տարբեր տեսակետների և սկզբունքների տեր մարդիկ: Ստեղծված իրադրությունը Մարգարիտին դարձրել էր բանիմաց ու շրջահայաց. նա համոզված էր, որ քաղաքական լարված մթնոլորտում ժողովրդին խաբելն անհնար էր: Բայց նա լռում էր, մինչև վերջնականապես կպատմվեր հոր այլանդակ դիմակը, մինչև հանդես կգար հենց ինքը՝ ժողովուրդը, և հիմնավոր փաստերով կբացահայտեր հոր կատարած արարքների անարդարությունը: Մարգարիտը գիտեր, որ լեռներում ապրող մարդիկ ոչինչ չեն մոռանում, ոչինչ չեն թողնում առանց վրեժի և փոխհատուցման:

Անարգաբայի Սմբատ իշխանի այլանդակ ընտանիքի մեջ, ուր իշխում էին բռնությունն ու վայրի բարքերը, մխիթարական շատ քիչ բան կար. ժողովրդին ջերմացնող սիրտն ու միակ լուսավոր կետը Մարգարիտն էր, որը հեղինակի կողմից

բնութագրվում էր իբրև առաքինի, համեստ, խելացի և բարեհամբույր մի աղջիկ, որ վայելում է թե՛ զինվորների և թե՛ ժողովրդի սերն ու հարգանքը. «Մարգրիտ այդ պալատին մեջ՝ փշոտ մացառներու և տատասկներու մեջ աննման ծաղիկ մը, որ ամենն ժպիրիները և անզգամները կհարգեին ու կպատվեին» (Էջ 117):

Սմբատի մահից հետո ժողովուրդը Մարգարիտին դարձնում է բերդի տիրուհի, և այդ օրերից սկսած՝ Մարգարիտի իմաստուության և գթառատության շնորհիվ Անարգաբայի իշխանության սահմաններում թագավորում է արդարությունն ու երջանկությունը:

Մարգարիտն ընթերցողին ներկայանում է ազնիվ ու մարդասիրական զգացումներով օժտված մի աղջիկ: Իբրև գթության քույր՝ նա, ամեն առավոտ դեղատուփը ձեռքին, գնում էր բուժելու անօգնական հիվանդներին: Վերջիններիս ցույց տված իր սրտացավ վերաբերմունքով և բարեխիղճ աշխատանքով արժանանում է Նրանց բոլորի համակրանքին: Ամեն անգամ, երբ ապաքինված հիվանդները բաժանվում էին իրենց սիրտը վեհացնող Մարգարիտից, Նրանց թվում էր՝ բաժանվում էին իրենց հարազատ քրոջից⁴:

Մարգարիտը վեպում հանդես է գալիս իբրև սիրող ու հարգող ամուսին, սիրագործ և հոգատար մայր, երեխաների հիանալի դաստիարակ, ամուսնու սքանչելի ընկեր ու խորհրդատու, Անարգաբա բերդի կառավարիչ⁵: Նրա խորհուրդներով են առաջնորդվում թե՛ բերդի բնակչությունը և թե՛ ոյուցագուհիները: Առանց իրենց տիրուհու գիտության Նրանք ոչ մի քայլի չեն դիմում, ինչպես խաղաղ աշխատանքի ժամանակ, այնպես էլ պատերազմական գործողությունների ընթացքում: «Մարգարիտը,- գրում է Ռ. Նանուկյանը,- իր մարդկային բարձր առաքինություններով, որպես դրական կերպարի իդեալ, մտել է մեր գրականության մեջ հայտնի կին հերոսների շարքը՝ Մուրացանի քույր Աննայից մինչև Շիրվանզադեի անձնուրաց Շուշանիկը⁶:

Վեպում Մարգարիտը և Եվփիմեն երկու տարբեր բնավորություններ արտահայտող կերպարներ են, որոնք ինքնին արտահայտում են մարդկային առաքինության մասին հեղի-

⁴ Տե՛ս **Ծերենց**, Երկեր, Երևան, 1957, էջ 170:

⁵ Տե՛ս **Տերտերյան Ա.**, Հայ կլասիկներ, Երևան, 1944, էջ 108:

⁶ **Նանուկյան Ռ.**, Ծերենց. կյանքը և գործը, Երևան, 1986, էջ 143:

նակային իդեալի տարբեր կողմերը. մեկը՝ աշխույժ, անհանգիստ, ոգևորված, միշտ հիացող, մյուսը՝ լռիկ, ներհուն, իմաստնացած իր խոհերի և որոշումների մեջ, երկուսն էլ գեղեցկի ձգտումներով ու զգացմունքներով լեցուն, բարի ու գթառատ⁷:

Կնոջ կերպավորումը «Երկունք Թ. դարում» վեպում

Ծերենցի վիպական կերպարները՝ Թորոս Լևոնին, Հովնանը, Գուրգենը, Թեոդորոս Ռշտունին, լինելով հայրենասերներ, բնական է, որ պիտի ունենային այնպիսի առինքնող, հայրենասեր կանայք, որպիսին պատկերված են նրանք վեպերում: Ծերենցը, այսպիսով իր երկերում բարձրացնելով հայ կնոջ դերն ու նշանակությունը, ցույց է տվել նրանց մարդկային բարոյական բարձր արժանիքները: «Առանձնապես նշելի է նրա վերաբերմունքը կնոջ նկատմամբ,- գրում է Ա. Տերտերյանը,- նա հայ կնոջը հանեց Տյուսաբի նկարագրած ընտանեկան ջերմոցից և նրան ցույց տվեց հասարակությանը օգտակար լինելու ուղին»⁸:

Պատմական այն սկզբնաղբյուրներում, որոնք օգտագործել է Ծերենցը, հայ կնոջ բնութագրող փաստերը քիչ են: Սակայն ակնբախ է հեղինակի ունեցած վերաբերմունքը հայրենասեր կանանց նկատմամբ, որոնց պատկերում է թե՛ պատերազմական գործողությունների մեջ, թե՛ հասարակական միջավայրում և թե՛ ընտանեկան պայմաններում: Հմուտ լինելով մեր ժողովրդական էպոսի՝ «Սասունցի Դավթի» ժամանակաշրջանին և նրա մեջ արտացոլված դեպքերին՝ Ծերենցն օգտագործել է էպոսում եղած որոշ երևույթներ:

«Երկունք»-ի և ժողովրդական էպոսի մեջ պատկերված կանանց որոշ կերպարների մի քանի գծերը՝ նվիրվածությունը հայրենիքին, հավատարմությունը սիրած էակին, ազատ սիրո գաղափարները և կնոջ պարտավորություններն ընտանիքում, նման են: Օրինակ՝ Հեղինեի կերպարը հիշեցնում է մեր էպոսի Խանդուբե Խաթունին. նրա պես գիտեր գետնաքարշ թունավոր սողուններ ոտքի տակ առնել, ճզվել ու ջախջախել...

«Երկունք...» վեպում կանայք մեծ դեր են խաղում թե՛ իբրև մայրեր, թե՛ իբրև սիրող ամուսիններ: Ծերենցը քաջածանոթ էր հայ կնոջ հոգեվիճակներին, նրա տվայտանքներին, նրա բնավորության շատ ու շատ կողմերին և մանավանդ զգացողական աշխարհին ու ապրումներին: Անշուշտ,

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 145-146:

⁸ **Տերտերյան Ա.**, Հայ կլասիկներ, էջ 120:

այդ ինդրում, ինչպես իրավացիորեն Լեոն է նկատել, Ծերենցի համակրանքը մեծապես հակված է դեպի իշխանական տոհմական ծագում ունեցող կանայք, հասարակ դասի կանայք չկան⁹: Նրա երկերում ռոմանտիկական ոգևորությամբ կերտված կանանց կերպարները ոչ պակաս հայրենասերներ են, քան իրենց ամուսիններն ու սիրեցյալները, որոնց համար միշտ բարի խորհուրդներ և պայքարի ընկերներ են եղել: Այդ տեսակետից հիշարժանի են մի քանի հերոսուհիներ, որոնք իրենց անձնուրաց գործունեությամբ օգնում են վեպի դրական հերոսներին, նպաստում երկի գաղափարական նպատակադրմանը: Այսպիսիք են Հեղինեն, Վասկանուշը, Հռիփսիմեն և Լաև Չարուհի Սյունյաց օրիորդը:

Գրավիչ շատ գծերով է օժտված Հեղինեն: Նա ազնիվ է, անկեղծ, հայրենիքին նվիրված անձնուրաց հերոսուհի: Նա Շեքսպիրի հերոսներից Բրուտոսի կնոջ նման «ոչ միայն տղամարդու մոքեր, այլև տղամարդու ուժ ունի»¹⁰:

Գուրգենի՝ Բյուզանդիա մեկնելուց և մոր մահից հետո Արծրունյաց փառասեր իշխանները Հեղինեի կալվածքներին տիրանալու համար նրան բռնի ամուսնացնում են իր չսիրած իշխանի հետ և տեր դառնում Արծրունյաց հարստության: Երկար ժամանակ Գուրգենից նամակ չստանալով՝ Հեղինեն խիստ մտատանջության մեջ է ընկնում: Նա հավատացած էր, որ կորցրել էր մի մարդու, որին սիրում էր ամբողջ ուժով: Այժմ այդ կորուստը նրա համար վշտերից ծանրագույնն էր: Երկար տարիների բաժանումը, սակայն, չէր հուսահատեցրել Հեղինեին. նա գիտեր, որ Գուրգենը մի օր պիտի վերադառնար դեպի այն սիրտը, որին երիտասարդական ջերմ սիրով սիրել էր, և որը տակավին ապրում էր՝ իր կորցրած սերը վերագտնելու հույսով:

Ծերենցն իր վեպերում հաճախ ջանում էր ստեղծել սիրո ռոմանտիկ պատկերներ. նա աշխատում էր վիպական գործողությունները դարձնել նպատակասլաց, հետաքրքրություն մտցնել զանազան արկածալից, արտասովոր միջադեպերի նկարագրությամբ: Սիրող զույգերի պատահական, անսպասելի հանդիպումներն առհասարակ Ծերենցի նախասիրած ձևն են, այն բանալին, որով նա կարողանում է բացահայտել հերոսների ներաշխարհը, նրանց զգացմունքների բուռն պոռթ-

⁹ Տե՛ս Լեոն, Ռուսահայոց գրականությունը, Վենետիկ, Ս. Ղազար, 1904, էջ 275:

¹⁰ **Տերտեղյան Ա.**, Հայ կլասիկներ, էջ 89:

կումը: Գուրգենի նամակի կեղծումը, Հեղինեի անակնկալ ամուսնությունը, Գուրգենի հայտնվելը Անձևացյաց իշխանի ամրոցում ըստ Էուբյան հեղինակային կամայականության արդյունքն են, որոնց միջոցով գրողը հետաքրքիր է դարձնում իր վեպը: Ամսոռաց է Հեղինեի և Գուրգենի հանդիպման տեսարանը Կանգուարի ամրոցում: Որքա՞ն մեծ ուրախություն է պատճառում այդ հանդիպումը երկուսին, ինչպիսի՞ հրճվանքով էր լցվում նրանց սրտերն այն պահին, երբ նրանք վերստին գտել էին իրար: Հեղինեի նկատմամբ տածած բուռն սիրո զգացմունքն էր, որ հոգեկան մեծ տպավորություն էր պատճառել Գուրգենին և «ձյունին», «բուքին», «սառնամանիքին» բերել-հասցրել էր Ռշտունյաց Ոստանը: Հեղինեի և Գուրգենի բերկրանքն անսահման էր: Թվում էր՝ նրանք շատ երջանիկ են, բայց իրականում այդպես չէր. Գուրգենն ազատ էր, Հեղինեն՝ ամուսնացած:

Հեղինեի հոգեվիճակը չափազանց հուզիչ էր. նրա ներաշխարհում ուժեղ պայքար էր տեղի ունենում, կռվում էին երկու հակառակ զգացումներ՝ Գուրգենի նկատմամբ տածած անկեղծ սերը և ամուսնու պատվասիրությունը: Սակայն, երբ Հեղինեի մեջ առաջացած հոգեբանական գոտեմարտը խաղաղվում է, սկսում է մտածել իր ազգի համար, աշխատում է այդ սերը զուգակցել հայրենիքի, ժողովրդի, բախտի և նրա կյանքի բարեկեցության հետ: Նա առանց հայրենիքի փրկության չի պատկերացնում իր երջանկությունը և հասարակական պարտքի այս խոր գիտակցությամբ լցված՝ պահանջում է Գուրգենից, որ նա ապրի իր ազգի, իր ժողովրդի համար, որի պատիվն այդքան արհամարհված է եղել արաբական տիրապետության ժամանակ:

Հեղինեն Գուրգենին հորդորում է իր անձը նվիրել հայրենիքի փրկության գործին՝ իրեն փայփայելով այն հուսով, որ Գուրգենը պետք է փառք ու հռչակ ստանա այդ կռվի մեջ, ժողովուրդը պետք է փառաբանի նրա անունը և հենց դրանով էլ պիտի մխիթարվի իր վիրավոր ու խոցված սիրտը:

Գուրգենի հեռանալուց հետո Հեղինեի հոգին փոթորկվում է. սերը դեպի Գուրգենը պարուրված էր մի խորին մտահոգությամբ, մի տեսակ տազնապալի անհանգստությամբ: Ինչո՞վ էր վերջանալու Գուրգենի կյանքը: Նա, այս խոհերով էր տարված, երբ հանկարծ հայտնում են Գուրգենի ձերբակալության բոթը: Հեղինեի սիրտն ալեկոծվում է, զգում է, որ

այլևս աշխարհում միայնակ է, որովհետև կորցրել է թանկագինը, առանց որի դժվար է ապրել: Նա պատրաստ էր իր անձը զոհաբերել Գուրգենին բանտից ազատելու համար: «Բայց Գուրգենի պես դյուցազնի մը անողորմ բանտի հալելուն տանիլ անկարելի էր ինձ,- ասում է նա վճռական տոնով իշխանին,- ուստի պետք էր զանի ազատելու համար զոհել կյանք, պատիվ... և ամեն բան. այո՛, ես հանձն առած եմ ամեն բան» (Էջ 407):

Հիրավի, Հեղինեն դառնում է անձնագոհության, հերոսության մի կատարյալ մարմնացում: Դարաշրջանի հայրենասեր տղամարդկանց նման արհամարհելով մահը՝ ձեռնարկում է Գուրգենին բանտից ազատելու վտանգավոր գործը. նա գնում է անձնագոհության, որից երբեք չի ընկրկում:

Հեղինեն մինչև վերջ հավատարիմ է մնում իր ուխտին: Նրան հաջողվում է խոյի գմբեթի խավարչտին բանտից ազատել սիրեցյալին և վերադարձնել իր հարազատ ժողովրդի գիրկը: Անձնացյաց Մուշեղ իշխանի մահից հետո Հեղինեն ամուսնանում է Գուրգեն իշխանի հետ:

Վեպի հետաքրքիր կանաց կերպարներից է Վասկանուշը, որը նույնպես պատկերված է ռոմանտիկ գույներով: Ակադ. Ա. Տերտերյանը վերջինիս անվանել է «ապերջանիկ», քանի որ վեպի մյուս կանանց նման նա չուներ հասարակական և անձնական բախտի ներդաշնակությունը: Նա կարող էր լինել մի Մարգարիտ կամ Սեդա, սակայն իր կամքից անկախ դարձել էր վանականուհի¹¹:

Բնությունը նրան օժտել է մարդկային բնավորության լավագույն հատկություններով. բարի է, համեստ ու առաքինի: «Ծերենցի համար իշխանական դասի կանայք ամեն տեղ նույնն են՝ վեհ, առաքինի, խելոք, վարչական ընդունակություններով առատապես օժտված: Չափազանց իդեալականացրել է Ծերենցը նախարարական տներում ապրող տիկնեղին և օրհորդներին. ոչ ոք պակասություն չունի»¹², - իրավացիորեն նկատել է Լեոն:

Հեղինակն իր հերոսուհուն նկարագրում է Արտանուշի վանքում, երբ նա արդեն քսան տարի էր, ինչ գտնվում էր այնտեղ, իսկ նրա կյանքի՝ մինչև վանք գնալու շրջանի մասին հետո է պատմում: Վասկանուշը կորցրել էր իր սիրած տղային,

¹¹ Տե՛ս **Տերտերյան Ա.**, Հայ կլասիկներ, էջ 109:

¹² **Լեո**, Ռուսահայոց գրականությունը, էջ 275-276:

կորցրել էր երջանկությունը, իրեն զգում էր խորապես դժբախտ, ուստի թողնում է իր ունեցածը, հարազատներին և գնում է վանք՝ ողբալու սիրո կորուստը: Նրա հավատը ներքին վիշտը փարատելու արտաքին գործոն է միայն, քանի որ աշխարհիկ կյանքից հրաժարվելու և միայնության ձգտելու գաղափարին հասել էր ոչ թե բնական համոզմունքով, այլ անհույս սիրո թելադրանքով: Վանքը նրա հոգուն հանգիստ էր բերում, սփոփանք. ահա աշխարհում մի անկյուն, մտածում էր նա, ուր մաքուր, անշահախնդիր վերաբերմունքի հանդիպելով՝ կարող է հեռու մնալ իր սեփական դասակարգի բարոյական բարքերից:

Տարիներ շարունակ նա հոգեկան խոր տազնապ էր ապրում: Հեղինակը Վասկանուշի բարդ հոգեվիճակը մեկնաբանել է երկու առումով. նախ՝ նա, հակառակ ծնողների ցանկության, սիրել էր Հովնանին և պատճառ դարձել իր ճակատագրական դժբախտությանը, երկրորդ՝ նրանց երջանկությունը պատնեշվում էր այն ահավոր դասային տարբերությամբ, որն ընկած էր իշխանուհու և հասարակ գյուղացի Հովնանի միջև:

Վասկանուշի համար այդ սերը դիտվում էր հասարակական օրենքի հանդուգն խախտում: Նա ազնվականի աղջիկ էր, տիրող արտոնյալ դասի ներկայացուցիչ, իսկ Հովնանը՝ հասարակ ժողովրդի ներկայացուցիչ, ուստի նրանք իրավունք չունեին միմյանց սիրելու: Հենց սա է նրանց սիրո ողբերգության պատճառը: Դասային անհավասարությունը հասարակական մեծագույն չարիք է, մարդկանց դժբախտության աղբյուր. այս է գաղափարական եզրակացությունը: Արտանուշի վանքում քսանյոթ տարվա բաժանումից հետո Հովնանի հանկարծակի հայտնվելը խիստ հուզում է Վասկանուշին: Նրա սիրտը լցվում է տազնապով, և նա կանգնում է երկու անհարիր զգացմունքի՝ սիրո և հավատի առջև: Վասկանուշը Հովնանին տեսնելիս փորձում է սառնարյուն ձևանալ, խանդավառ ու երկմտություն պատճառող ապրումները ծածկել և աշխատում է իր սերը գաղտնի պահելու ճիգեր անել, սակայն ապարդյուն. նրա կամքի ուժը տեղի է տալիս կանացի թուլության առաջ, և երբ Հովնանը համբուրում է նրա նուրբ ու փափուկ ձեռքը, նա հուզմունքից ուշաթափվում է: «Ծերեց,- գրում է Լեոն,- լինելով սաստիկ կրոնասեր, չէ կարողացել աղարտել վանքի անունն ու պատիվը. և մայրապե-

տը ու լեռնցի գինվորը, երկու վաղեմի սիրահարներ, սուրբերի պես են իրար համբուրում»¹³:

Հովնանի և Վասկանուշի սիրո ազնիվ զգացմունքների գեղարվեստական պատկերումը հեղինակի վիպասանական արվեստի փայլուն դրսևորումներից է, ռոմանտիկ գույներով պարուրված մի գեղեցիկ և հուզիչ պատմություն: Հեղինակը հոգեբանական նրբանկատությամբ պատկերում է նրանց փոխադարձ վեհացնող սերը *վանքի*¹⁴ մռայլ պատերի ներսում: Քառորդ դար է անցել նրանց վերջին հանդիպումից, բայց նրանց սրտերում չի մարել երիտասարդական տարիների առաջացած սիրո հուրը: Նրանք սիրում են իրար խելահեղորեն, զգվում կարոտով իրար և այդպես գրուցում երկար, շատ երկար: Նրանք համոզված են, որ բնությունը մարդուն օժտել է ազատ ապրելու և սիրելու իրավունքով, բայց մարդկային այդ ազնիվ զգացումները կաշկանդվել են բնության անսահմանափակ օրենքներով՝ մարդու ազատ կամքի առջև կանգնեցնելով դասակարգային բոլոր պատնեշները: «Քեզմով ես երջանիկ կրնայի լինիլ աշխարհիս վրա՝ իմ այս միայնության կյանքով,- ասում է Վասկանուշը Հովնանին,- աստված այս վերջինը միայն կամեցավ, որովհետև մարդիկ Նորա օրենքները ծամածռել հանդգներ են. ծնողք հիմար սովորությանց և գոռոզության իրենց զավակները և իրենց ծնելական գուրքը զոհել օրենք ըրեր են. և ազնվատոհմությունը, երբ բարձրեն արհամարհոտ աչք կծգե ռամկին վրա և կկարծե, թե այդ անարգ արարածն իրեն համար է ստեղծյալ, ահա այսպես կպատժվի և գերության շղթայներու դառն ճաշակը կառնե» (Էջ 355):

Վասկանուշը ջերմագին սիրում է Հովնանին՝ այդ սիրո մեջ չճանաչելով ոչ մի խոչընդոտ, ոչ մի դասային տարբերություն. «Ես քեզ սիրեցի և դարձյալ կսիրեմ և միշտ պիտի սիրեմ» (Էջ 355):

Սրբագան և անկեղծ սիրով կապված լինելով Հովնանի հետ՝ նա հակառակ ծնողների պնդումներին՝ իր իշխանական իրավունքների և նրանց ոտնահարման մասին, մտում է անդրդվելի. «Ես չեմ ուզեր, որ դու աշխարհիս հիմար օրենքները աստուծո բնության հրամայած օրենքներեն վեր դնես», - ասում է նա Հովնանին (Էջ 355):

¹³ **Լեո**, Ռուսահայոց գրականությունը, Էջ 276:

¹⁴ Վեպում Վասկանուշը վանքը բանտ է անվանում:

Ծերենցը քննադատում է ժամանակի բարոյական «սրբագործված» օրենքները, դրամական հարաբերությունների վրա հիմնված առանձին անհատների դժբախտությունը, փողի, հարստության վրա խարսխվող մարդկային հոգեբանությունը: Հովնանի և Վասկանուշի սիրո պատմությունը տրված է գեղարվեստական ընդգծված հակադրությունների միջոցով. հեղինակը իրար հետ բախման մեջ է դնում սոցիալական տարբեր խավերի պատկանող մարդկանց՝ իրենց փոխադարձ հարաբերություններով, խոհերով ու զգացմունքներով:

Հովնանը բարդ անհատականություն է: Ծերենցը նրան հանդես է բերել սուր դրությունների ու բախումների ոլորտում, անընդհատ զարգացող գործողությունների մեջ: Խութեցին ամբողջ հոգով նվիրված է Վասկանուշին, իր կյանքի իմաստը նա տեսնում է իր սիրած էակի մեջ, այս բոլորը վեպում պատկերված է ռոմանտիկական շնչով, բայց ժողովրդական մարդը խորապես սիրում է նաև իր հայրենիքը: Հեղինակը ընտանիքի և կենցաղի հարցերը չի առանձնացնում հասարակական-քաղաքական հարցերից: Նախ՝ հայրենիքի մասին պետք է մտածել, ապա՝ Նոր անձնական երջանկության. այս հայեցակետից ելնելով է, որ գրողը գնահատում է իր հերոսներին: Ժողովրդի տառապանքին ունկնդիր՝ նա թողնում է Վասկանուշին ու պայքարելու բուռն եռանդով լեցուն վերադառնում հայրենիք:

Բարոյական բարձր արժանիքներով օժտված Վասկանուշի հասարակական գիտակցությունը խորապես ներդաշնակ է Հովնանի գաղափարախոսությանը:

Վասկանուշի գիտակցական կյանքը վանքում էր անցել. շրջապատի միանձնուհիներից նա տարբերվում էր բարձր գիտակցությամբ, բարի ու հեզ բնավորությամբ: Նա շատ-շատերի կյանքն էր փրկել, օգնել իր խեղճ ու թշվառ ժողովրդին: Նրա իշխանության տարիներին վերացել էին ճշումն ու հարստահարությունը, և ակնհայտ էր դարձել իշխանուհու բանիմաց, խելացի, արդարադատ ղեկավարության շոշափելի արդյունքը: Վասկանուշն անձնագոհության սկզբունքի ներկայացուցիչն է վեպում: Նրա անձնագոհ խիզախությունը զարմանք և հիացմունք էր պատճառում շրջապատի մարդկանց:

Երկրի համար ծանր օրերին Վասկանուշը, առաջնորդելով ժողովրդին, դուրս է վտարում Արտանուշի գավառը ներ-

խուժած արաբական զորքերին: Նա կոչ էր անում ժողովրդին զենք կրելու և ամենևին չհետևելու «մի կալ հակառակ չարին բռնությամբ» ավետարանական սկզբունքին¹⁵:

Նախարարական երկպառակությունների և առհասարակ իշխանների վարքագծի մասին բացասական կարծիք ուներ Վասկանուշը: Նա ավելի լավ էր համարում առաքինությամբ ծառայել ժողովրդին, քան «երթալ անիրավության և կեղեքման մասնակցել»: Վասկանուշը վեպում պատկերված է իբրև զարգացած մի միանձնուհի, որը ծանոթ է մեր ժողովրդի անցյալի պատմությանը, գիտի ազգային հերոսներին, որոնք քաղցր զգացումներ են արթնացնում նրա հոգում: Նա տանջվում է այն ծանր ճակատագրի համար, որ բախտ է վիճակվել հարազատ ժողովրդին:

«Երկունք» վեպում պատկերված կանանց կերպարներից առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում Նան Արծրունյաց Մեծ տիկինը: Մի բարդ հոգեբանական կերպար է նա, որը հենց վեպի սկզբից դրված է դրամատիկական վիճակում: Հայրենասիրության վսեմ զգացումն ապրում ու շնչում է որդիներին ջերմորեն սիրող կնոջ կարոտավառ զգացմունքի հետ միասին:

Բայց նրա հոգին փոթորկվում է. մեծ հոգու տեր կինը ողբերգական պահեր է ապրում, երբ իր սեփական աչքերով տեսնում է որդիների ազգադավ գործունեությունը: Ժողովրդի բախտով և նրա ճակատագրով ապրող կնոջը տանջալի գիշերները և անմոռաց ծանր խոհերը հանգիստ չեն տալիս: Նա մտաբերում է, թե որքան մեծ տարբերություն կար Հովնանի և իր փառասեր որդիների կատարած արարքների միջև: Խուլթեցին անձնագոհ հայրենասեր էր, իսկ Աշոտ և Գուրգեն Արծրունիները՝ դավաճաններ. հայրենիքը վտանգի մեջ գտնվելու ժամանակ Հովնանը մասնավորը զոհում էր քրոնդիանությունին, իսկ դավաճան իշխաններն ազգի համար որևէ օգտակար բան չէին անում. փողը աղավաղել և այլանդակել էր նրանց հոգին, շփացրել նրանց, որոնք իրենց կյանքը վատնում էին խրախճանքներում գիշերային կանանց միջավայրում: Հեղինակը մի դեպքում նկարագրում է Հռիփսիմե տիկնոջ որդիների կործանումը, իսկ մյուս դեպքում մոր հոգեբանական դրաման, երբ հայրենասիրության զգացումը բախվում է մայրական սիրո ազնիվ զգացման հետ:

¹⁵ **Տերտերյան Ա.**, Հայ կլասիկներ, Էջ 110:

Այստեղ, անշուշտ, դարձյալ հաղթում է հայրենասիրության գաղափարը, քանի որ այն, ըստ Ծերենցի, ամենավսեմ և ամենաբարձր գաղափարն էր:

Հիրավի, Արծրունյաց տոհմում միայն այդ խելացի և պարկեշտ կինն է, որ ջերմորեն սիրում է իր հայրենիքը և պատրաստ է գոհել նրա համար ամեն բան:

Հասարակ ժողովրդի նկատմամբ արտակարգ սիրալիր վերաբերմունք ունի Արծրունյաց տիկինը: Նա իրավացիորեն արատայտվում է, որ հայ մեծամեծ իշխանների ամենահիմնական սխալներից մեկը ժողովրդի նկատմամբ նրանց ունեցած արհամարհական վերաբերմունքն է: Մինչդեռ տիկնոջ կարծիքով ժողովուրդն էր այն հզոր ուժը, որը կարողանում էր պաշտպանել հայրենիքը թշնամու հարձակումներից: Նա հավատացած էր, որ ժողովրդի տառապանքները վերջ պիտի ունենան, քանի որ չկար ավելի հզոր մի ուժ, որ ծնկի բերեր նրան: «Մեր մեծամեծ իշխանաց հազար մեկ հիմարությանց առաջիններեն մեկն էլ,- ասում է հեղինակի մտքերն արտահայտող Հռիփսիմե տիկինը,- կարհամարհեն, ոչինչ կհամարին իրենցմե շատ վատ գտնված ժողովրդյան մարդը. նորա խելքեն, քաջութենեն, կարողություններեն օգուտ քաղել ամենևին չգիտեն» (Էջ 253):

Ինչպես տեսնում ենք, Մեծ տիկինը քննադատում է իշխանների վարքագիծը, նրանց գոռոզամտությունը, անտարբերությունը ժողովրդի ճակատագրի հանդեպ:

Նա ոչ միայն ցավով է խոսում հասարակ ժողովրդին վիճակված ծանր կացության մասին, այլև ընդունում է, որ դրա պատճառը իր դասակարգի մարդիկ են:

Հեղինակը ձգտել է այդ կերպով ցույց տալ այն ահավոր տարբերությունը, որ կա ազնվական դասի և ժողովրդի միջև:

Ծերենցն ընդգծում է իր բացահայտ դրական վերաբերմունքն այդ կերպարի նկատմամբ: Առանձին ուշադրություն է դարձնում նրա հայրենանվեր գործունեությանը: Արծրունյաց տիկինը մասնատված, մանր իշխանությունների բաժանված նախարարական կենտրոնախույս ուժերի կենտրոնացման գործում իր կանացի նրբամտությամբ օգնում է առաջադեմ ուժերին, մանավանդ այն դեպքում, երբ հայրենիքը անխուսափելի ճգնաժամի մեջ էր գտնվում: «Հռիփսիմե տիկինը, երբ վտանգն սպառնար՝ խելքը չի շփոթեր,- գրում է հեղինակը,- մանավանդ թե շատ անգամ, երբ այդ մարդիկ ի-

րենց գլխուն ղեկը կկորուսեին, նա իրերը, պարագաները կշռել և համեմատել գիտեր, և ըստ այնմ շարժիլ խորհուրդ կուտար» (Էջ 252):

Հեղինակի բնութագրումից երևում է, որ Մեծ տիկինը անցյալում բավականաչափ ազդեցիկ է եղել, կատարել է մեծ գործեր հայրենիքի ու ժողովրդի համար, բայց վեպում ծավալող գործողությունների մեջ նա հանդես չի գալիս:

Ծերենցը Արծրունյաց տիկնոջը ներկայացնում է որպես խոր խառնվածքի տեր մի հայ կնոջ, ուժեղ բնավորության ցայտուն գծերով. նա ունի պարզ հոգի, արտաքուստ միշտ մեղմ է, անսահման բարի, խիստ զայրանում էր, երբ լսում էր, որ արաբական բռնակալները համարձակվում են ոտնահարել հայ ժողովրդի պատիվը, դարերով ստեղծած մշակույթը:

Խոսքով Ավետացու հետ ունեցած նրա սրտամոտ զրույցից պարզվում է, որ նա եղել է իր ժամանակի զարգացած կանանցից մեկը, խորապես ուսումնասիրել է մեծն Ներսեսի ժամանակից սկսած Մերուժանների, Բագրատունի ասպետների, Շավասպ Արծրունիների, Վարդան Մամիկոնյանների մասին եղած պատմությունները:

«Երկունք»-ը հայրենասիրական գրավիչ երկ է: Ծերենցն իր վեպով հաստատում է, որ այնտեղ է իսկական արվեստը, ուր մարմնավորված է ժողովրդի սիրալի պայքարը, նրա հայրենասիրությունն ու հերոսականությունը, ջատագովվում է անձնագրիությունն ու նվիրվածությունը հայրենիքին:

Կնոջ կերպավորումը «Թեոդորոս Ռշտունի» վեպում

«Թեոդորոս Ռշտունի» վեպի հմայիչ կանանց կերպարներից է Ռշտունյաց տիկինը՝ Սեդան, որը գաղափարական-գեղարվեստական իմաստով վեպի ամենավառ պատկերված կանանցից է: Նա աչքի է ընկնում իր եռանդուն գործունեությամբ, հոգեկան հարուստ ներաշխարհով, բնավորության ուրույն գծերով, հայրենիքին ու ժողովրդին ծառայելու ազնիվ ձգտումով: Նա սերտորեն կապված է իր ամուսնուն, հետևում է նրա ամեն քայլին, ուրախանում նրա հաջողություններով, տխրում նրա անհաջող ընթացքի համար: Վիպասանը, հանձին Սեդայի, ստեղծել է իր նախասիրած կանացի մի կերպար՝ ներքին ու արտաքին բարեմասնություններով, զգացումներով ու տենչերով, առաքինություններով, «արտաքր» գեղեցկությամբ: «Սովորական կին չէ Ռշտունյաց տիկինը,- գրում է Ծերենցը նրա մասին,- հազիվ քառասունամյա՝ շատ

ավելի պակաս կցցներ, յուր կերպարանած գեղեցկությունը այնպիսի փայլ չունեն, որ աչք շլացներ, այլ այն վարպետներու նկարներուն կատարելություն ունեն, որ քանի նայի ոք՝ աչքը կգրավե, կհափշտակե, վայելուչ հասակը, դիմաց համեմատությունը, հոնից և աչաց հրամայող ակնարկը՝ խառնուրդ խստության և քաղցրության, որք ձգող և տիրապետող գորություն մը ունեին...» (էջ 509-510):

Սեդայի մեջ, իբրև բարոյական ամենաբարձր հատկանիշ, հեղինակն ընդգծում է ամուսնուն անսահման նվիրված լինելը: Ռշտունու կյանքի ամենաձանր րոպեներին Սեդան է միշտ եղել նրան նեցուկ և փրկության խարիսիս: Նա է եղել ոգևորության աղբյուր նրա ռազմական բուռն գործողությունների ընթացքում: Ռշտունյաց տիկինն անսահման սիրում էր Թեոդորոսին և՛ իբրև ամուսնու, և՛ իբրև պետական գործին նվիրված մարդու, ազնիվ հայրենասերի: Ամուսնու բացակայության ժամանակ ազգային արժանապատվության բարձր գացումով համակված՝ երկրի ղեկավարումը վերցնում է իր ձեռքը՝ օգնելով ռազմադաշտում պատերազմող ամուսնուն: Նա անձնուրացության չափ նվիրված է այն ընդհանուր գործին, որի համար պայքարում էին թե՛ իր ամուսինը և թե՛ ժողովուրդը: Ստեղծված քաղաքական ծանր պայմաններում նա երբեք չէր հուսահատվում, չէր կորցնում իր հավատը գալիք ապագայի նկատմամբ: Նա միշտ հորդորում էր ամուսնուն լինել քաջ, չվհատվել, չընկրկել, այլ հերոսաբար մարտնչել մինչև հաղթանակի լիակատար ապահովումը: Նա գտնում էր, որ հայրենիքին ու ժողովրդին փրկելու համար պետք էր նվիրաբերել ամեն ինչ՝ և՛ ընտանիք, և՛ երջանկություն, և՛ տոհմական կալվածքներ:

Ծերենցը, ընդգծելով Սեդայի գործնական պետական գործիչ լինելը, չի մոռանում, սակայն, նրա ընտանեկան կյանքը: Նա ամենից առաջ առինքնող կին է ու հոգատար մայր, ունի սիրող ամուսին, նաև ընտանեկան այլ մտահոգություններ: Հեղինակը նրա մեջ խտացրել է ազնվական կանանց բոլոր առաքինությունները: Նա ունի իր յուրահատուկ բնավորությունը, ամուր է, ուժեղ կամքի տեր, խստապահանջ ու լուրջ: Նա աչքի է ընկնում իր բնական առատածեռնությամբ, որի հետևանքով էլ դառնում է բոլորի սիրելին:

«Թեոդորոս Ռշտունի» վեպի հերոսուհիներից է նաև Համասպրուհին, որը, ինչպես Ծերենցի մյուս կանայք, ակտիվ

Նկարագրի տեր մարդ է և հայրենիքի ծանր վիճակի հանդեպ հանդես է բերում մտքի նրբություն. հասկանալով առաջավոր մարդկանց ձգտումը՝ դիմադրում է արաբներին և փրկում հայ կուլտուրան վերահաս վտանգից, որին ի նպաստ ի սպաս է դնում իր հարստությունը¹⁶:

Ինչպես նախորդ վեպերում, այնպես էլ այս երկում ժողովրդի մղած քաղաքական պայքարի մեջ ներգրաված հայրենասեր կանայք երջանկություն են որոնում ոչ միայն ընտանեկան նեղ մթնոլորտում, այլև հասարակական-քաղաքական գործունեության մեջ: Օտարերկրյա նվաճողների նկատմամբ տածած անսահման ատելության զգացումով համակված՝ նրանք ոգեշնչում և իրենց սեփական նախածեռնությամբ, քաղաքական ինքնուրույն մտածողությամբ, բոլորանվեր և անվերապահ անձնվիրությամբ օգնում, հորդորում, խրախուսում են իրենց ամուսիններին:

Ծերենցի վեպերում հանդես եկող բոլոր կանայք՝ «Թորոս Լևոնի»-ի մեջ եվփիմեն, Մարգարիտը, «Երկունք»-ի Վասկանուշը, Հեղինեն, այս վեպում Սեդան և Համասպրուհին, բոլորը դրական կերպարներ են, բոլորն էլ օժտված մարդկային լավագույն հատկություններով, հոգեկան հարուստ ներաշխարհով, բուռն հայրենասիրությամբ և ռազմական ընդունակությամբ: Նրանք ոչ միայն ռազմադաշտում, այլև ամենուր հանդես են գալիս միշտ հավատարիմ, միշտ համերաշխ, միշտ կամակից իրենց ամուսիններին ու սիրած եակներին: Թեոդորոս Ռշտունու կարծիքով երկիրը վտանգի մեջ լինելու պահին կինը կարող էր և պետք էր ղեկավարեր երկրի քաղաքական ու տնտեսական կյանքը: Նա, շինականներից լսելով Մամիկոնյան տիկնոջ գովքը, ասում է. «Քիչ-քիչ ինձ համոզմունք կդառնա, թե մենք երջանիկ ընելու համար ժողովուրդը կանանց պետք է հանձնենք երկրին կառավարությունը, և միայն պատերազմով զբաղինք, միայն եթե այն ևս կարենայինք հաջողությամբ ի գլուխ հանել» (Էջ 449):

Վիպասանն առանձին քնքշանքով է կերտել Ռշտունյաց գեղեցիկ օրհորդի կերպարը: Թենին հանդես է գալիս այն ժամանակ, երբ ծերուկ Ատոմին ամոթխած ակնարկներով պատմում է իր առաջին սիրո մասին: Ամառային մի լուսնյակ երեկո՝ Թենին պարտեզում Ատոմի հետ զբոսնելիս, բացում է նրա առաջ իր սրտի գաղտնիքը: Նրա մտքով անցնում են

¹⁶ Տե՛ս **Տերտերյան Ա.**, Հայ կլասիկներ, էջ 111-112:

բազմաթիվ պատկերներ, որոնք գերազանցապես վերաբերվում էին իր և Գրիգորի առաջին հանդիպմանը, այն մտերմությանը, որ աստիճանաբար անզուսպ և նվիրական սիրո էր փոխվել: Թենին, առաջին անգամ տեսնելով Գրիգորին, հափշտակվում է նրանով, գերվում նրա բարեմասնություններով, խելացիությանը, պարզ ու համեստ խոսակցությամբ:

Գրիգորի՝ Վարդանաբերդ մեկնելու ևսխորդող գիշերը նրանք անկեղծ սրտաբացությամբ խոստովանում են միմյանց իրենց ջերմ սիրո մասին: Երբ Թենին տեղեկանում է Վարդանաբերդի հրդեհի մասին, հոգեպես տանջվում է. թվում է, թե իր սիրած Էակն այլևս չկա, մեռել է: Սակայն հավատարիմ իր սիրո ուխտին՝ Նա անսահմանորեն դարձյալ սիրում է Գրիգորին և թախծում այդ սիրո համար, նրա երագների մեջ վերակենդանանում է առաջին հանդիպման օրերի վերհուշը: Թենիի հոգին գնալով ավելի ու ավելի է վրդովվում, և ծանր պահեր է ապրում: Նրա համար կյանքը դառնում է անիմաստ:

«- ՉԷ՛, հայրիկ, եթե Նա չի կա, ինձ երջանկություն չի կա, աշխարհս մութ է ինձ համար», - ասում է Նա Ատոմին (Էջ 504):

Եվ Նա, ծանր թախիծով համակված, լուռ ու անձայն սկսում է դառնապես ողբալ իր սիրած Էակի կուրուստը:

Հեղինակն իր հերոսների հոգեկան ծանր ապրումների հիմնական շարժառիթները որոնում է իրականության մեջ: Եվ դա ճշմարիտն է:

Բյուրեղ Մամիկոնյանի գերդաստանին վիճակված ահավոր ողբերգությունը, որ ցնցող պատկերներով արտացոլված է վեպում, վճռական Նշանակություն է ունենում Գրիգորի և գեղանի Թենիի բախտի ու ճակատագրի համար: Վեպի գործողությունների զարգացման ընթացքում հեղինակը պատկերում է երիտասարդ հերոսների ողբերգությունը:

Վեպի ամենից ավելի հուզիչ կերպարներից է գեղանի Արփենին: Դժբախտ աղջիկը, փոքր հասակից զրկվելով ծնողներից, գերի է ընկնում բարբարոս Թումայի ձեռքը: Որբ ու անխնամ մեծացած դեռատի աղջկա մանկությունն ու պատանեկությունն անցնում են արցունքով: Նա օր ու գիշեր աղոթում ու աստծուց գութ և կարեկցանք է խնդրում ազատվելու բյուզանդական հղիացած ու ապականված միջավայրից: Իր վշտի մեջ ներսուզված Արփենիկի կերպարը զարգանում է հայրենի աշխարհից հեռու, օտարացած և խորթ միջավայ-

րում: Նրա համար անհրապույր է մթնոլորտը, սառը, անտարբեր և անկարեկից են նրան շրջապատողները. նա տառապում է այդ այլանդակ քաոսում, հարազատներից հեռու: Ծերենցն իր հերոսուհուն միջավայրի հետ բախման մեջ է դնում միայն այն բանից հետո, երբ ծպտյալ կերպով բյուզանդական արքունիք է մուտք գործում Չավեն հայրիկը: Վերջինիս և Արփենիկի տեսակցությունից հետո հեղինակը հետևում է նրանց ճակատագրերի զարգացմանն ու ընթացքին:

Գեղանի Արփենիի շուրջը հյուսվում է սիրո զգացմունքների, որոգայթների մի բարդ ցանց: Նրան են ուզում տիրանալ և՛ թագածառանգը, և՛ ավագակ Թումա գորավարը և շատ ուրիշներ: Սակայն Արփենին այդ մթնոլորտում կարողանում է պահպանել իր հոգու մաքրությունը, բարոյական անաղարտությունը:

Ծերենցի խորատես հայացքից չի վրիպել այն միջավայրը, որ գոյություն ուներ բյուզանդական արքունիքում: Հեղինակը մի կողմում պատկերում էր պալատական զեխությունն ու շռայլությունը, հղփացածությունն ու անբարոյականությունը, մյուս կողմում՝ այդ այլանդակ միջավայրում տառապող թշվառներին, որոնք շատ ավելի ազնիվ էին, վեհանձն, պատվազգաց, ընդունակ անկեղծորեն միմյանց հարգելու, քան ցոփության ու շռայլության մեջ ապրող թումաներն ու անկելիանները: Ատելով վերջիններիս ու նրանց նմաններին՝ հեղինակն իր ամբողջ համակրանքը վերապահել է նրանց զոհերին՝ արփենիներին, զավեններին և ուրիշներին: Այստեղ ավելի քան ցայտուն կերպով է արտահայտվել հեղինակի դեմոկրատական աշխարհայացքը:

LEVON ALOYAN - WOMAN'S PORTRAYAL IN TSERENTS' NOELS -

In general, we can state that by creating images of heroic and self-sacrificing female characters in his historical novels, Tserents aimed to educate the new generation. The female characters of Tserents's novels are devoted and passionate patriots, who, even in the hardest situations keep their sense of social responsibility high. Women's heroic deeds and their portrayal in novels allow us to indicate women's ventures and deeds throughout struggles of national liberation, to record the achievements that would not be possible without them, and to instill in the coming generations crucial categories, such as a national spirit and patriotism.

Key words: Tserents, historical novel, woman's portrayal, patriotic woman, self-sacrificing woman.

ЛЕВОН АЛОЯН - ОБРАЗ ЖЕНЩИНЫ В РОМАНАХ ЦЕРЕНЦ

Обобщая, можно умозаключить, что Церенц на примере женских образов в своих исторических романах, в их героических и самоотверженных деяниях хотел влиять на воспитание нового поколения. Представленные в романах женщины, даже в самые трудные обстоятельства, высоко держат планку гражданского самосознания, как патриотки, будучи горячо привержены к народному благу.

Публикация данного научного изыскания актуальна тем, что георическими деяниями женщин из церенцовских романов, описанием их образов становится возможным сделать периодизацию женского начинания и геройство в разных этапах национально-освободительной борьбы, еще более обозначив участие и лепту женщин в достижениях этой борьбы. Публикация статьи важна еще и в контексте укоренения народного духа, для его непрерывного сохранения и для очень актуальной и важной идеи, как патриотизм.

Ключевые слова. Церенц, исторические романы, образ женщины, женский патриотизм, женская самоотверженность

Referenses

1. Tserents, Erker, Yerevan, 1957 (in Armenian)
2. Terteryan A., Hay klasikner, Yerevan, 1944 (in Armenian)
3. Nanumyan R., Tserents. Kynaky ev gortsy, Yerevan, 1986 (in Armenian)
4. Leo, Rusahajoc grakanutuny, Venetik, S. Xazar, 1904 (in Armenian)